

**ԺԱՄԱՆԱԿԱՅՈՑՑ ՀՈՎՈՒԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԵԱՆՑ
ՊԻՆԿԼԱՄԹԸՆԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍ. ԵԿԵՂԵՑԻՈՑ**

Մաթաթ, Կիրակի եւ Երկուշաբթի հոն մնալու համար

Թուական	Այցելող Եկեղեցական	Զայն փոխարինող
Դեկտեմբեր 15, 16, 17	Տ. ԶԱԻԷՆ ՎՐԴ. ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ	
Յունուար 12, 13, 14	Տ. ՄԻՒՌՈՒՆ Ծ. ՎՐԴ. ԿՐՃԻԿԵԱՆ	
Փետրուար 16, 17, 18	Տ. ԳԱՌՆԻԿ ԲԶՆՑ. ՀԱԼԼԱՃԵԱՆ	
Մարտ 16, 17, 18	Տ. ԿԱՐԷՆ ԲԶՆՑ. ԿՏԱՆԵԱՆ	
Ապրիլ 13, 14, 15	Տ. ՎԱՐՂԱՆ ԲԶՆՑ. ԴԿՐԵԱՆ	
Մայիս 18, 19, 20	Տ. ՄԱՄԲՐԷ ԲԶՆՑ. ԳՈՒԶՈՒՅԵԱՆ	
Յունիս 15, 16, 17	Տ. ՎԱԶԷՆ ՎՐԴ. ՅՈՎՍԷՓԵԱՆ	

Թիւ 4730
Դեկտեմբեր 6, 1962

Մեծայարգ
Տիար Մանուկ Պաղտասարեան,
Ատենադպիր Ծխական խորհուրդի
Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ
Պինկհամթըն.

Յարգելի Պրն. Պաղտասարեան,

Առաջնորդ Սրբազան Հայրը, Ձեր խնդրանքին ընդառաջ եր-
թալով, մեզի հրահանգած է ներփակ Ձեզի դրկել Ձեր համայնքին
հովուական այցելութեանց ցանկը, Դեկտեմբերէն մինչեւ Յունիս:

Ինչպէս կ'երեւի ցանկին վրայ, յանձնարարուած է այ-
ցելող հոգեւորականներուն, որպէս զի Ձեր փափաքին համաձայն,
երկու-երեք օր մնան Ձեզի հետ՝ ընթացք տալու Ձեր ծուխին
ընթացիկ գործերուն:

Կ'ուզենք նաեւ աւելցնել, թէ Հոգ. Տ. Կիւրեղ Վրդ.
Գաբրիկեանի տեղ՝ Դեկտեմբեր 15ին Ձեր համայնքին պիտի այցելէ
Հոգ. Տ. Զաւէն Վրդ. Արզումանեան: Հայր Սուրբը, որ Լոնտոնէն
նոր փոխադրուած է մեր թեմին մէջ, զարգացած, անգլերէն քաջ
ծանօթ երիտասարդ եկեղեցական մըն է:

Հայր Սուրբը Երբթ, Դեկտ. 15ին Նիւ Եորքէն շոգեկառ-
քով կը մեկնի առաւօտեան ժամը 10.20ին եւ Պինկհամթըն կը հաս-
նի կէսօրէ ետք ժամը 2.45ին: Հաճեցէք զինքը դիմաւորել կափա-
րանը:

Զայս հաղորդելով Ձեզի առ ի գիտութիւն եւ մաղթելով
եկեղեցանուէր Ձեր աշխատանքներուն կատարեալ յաջողութիւն.

Մնամ խորին յարգանքօք

Սուրէն Մանուէլեան
Դիւանապետ

ՀՈՎՈՒԱԿԱՆ ԱՅԾԵԼՈՒԹԵԱՆՑ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՑ

ՊԻՆԿԷԱՄՔԸՆԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍ. ԵԿԵՂԵԾԻՈՑ

<u>Թուական</u>	<u>Այցելող Եկեղեցական</u>	<u>Ջայն Փոխարինող</u>
Յունուար 15.1961	Տ. Միւռոն Ս. Վրդ. Կրճիկեան	
Փետրուար 19	Տ. Տաճատ ԲՆՆյ. Դաւիթեան	Հայր Միւռոն
Մարտ 12	Տ. Գառնիկ ԲՆՆյ. Հալիւաճեան	Հայր Միւռոն
Ապրիլ 16	Տ. Կարէն ԲՆՆյ. Կտանեան	Հայր Միւռոն
Մայիս 21	Տ. Վաչէ Վրդ. Յովսէփեան	Հայր Միւռոն
Յունիս 28	Տ. Հմայեակ Ս. Վրդ. Ինդոյեան	

Թիւ 1764
Դեկտեմբեր 20, 1960

Մեծայարդ
Տիար Մանուկ Պաղտասարեան
Ատենադպիր Միսկան Խորհուրդի
Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ
Գինկհամթըն.

Յարգելի Գրն. Պաղտասարեան.

Առջնորդ Սրբազան Հօր յանձնարարութեամբ այսու կը յայտ-
նենք, թէ Ձեր խնդրանքին ընդառաջ երթալով՝ կարգադրուած է որ Ձեր
Եկեղեցւոյ հովուական այցելութիւնները ըլլան ներփակեալ ժամանակա-
ցոյցին համաձայն:

Ժամանակացոյցին վրայ գրուած է անունները այցելու եկեղե-
ցականներուն, որոնք նշանակուած թուականին պիտի այցելեն համայնքիդ
եւ եկեղեցւոյդ մէջ Ս. Պատարագի մատուցմամբ միիթարեն մեր հաւատաց-
եալ ժողովուրդը:

Մազթելով Ձեր քարի գործոց յաշտութիւն.

Մնամք Տիրաւանդ սիրոյ ողջունիւ
Ազօթարար

ՄԻՒՌՈՆ Ծ.ՎՐԴ. ԿՐՃԻԿԵԱՆ



Diocese of the Armenian Church of North America

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ

630 Second Avenue, New York 16, N.Y. ★ MURRAY HILL 6-0710

ՄԻՈՆ ԱՐԻՅՈՒՍՎՈՂՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Archbishop Sion Manougian

Առաջնորդ

Primate

Քի. 1760
Նոյեմբեր 20, 1960

Հոգեշնորհ
Յ. Կալէ Կրդ. Յովսէփեան
Հոգեւոր Հովիւ Ս. Ռաշ Եկեղեցւոյ
Եւնիքն Սիթի.

Սիրելի Կայր Սուրբ.

Առաջնորդ Սրբազան Հօր Հրահանգով այսու կը ներգրանդնը
Գրեկամբընի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ Համար պատրաստուած
Հոգուական այցելութեանց քանկը:

Նորին Սրբազնութեան յանձնարարութիւնն է որ Ձեր այցելութեան
Համար նշանակուած Թուականին երթաք Գրեկամբըն եւ Ս.
Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ Մէջ Ս. Գառարազի Ժամուցմամբ մի-
թարէն Հաւատարեալ ժողովուրդը:

Նմէ որոշեալ Թուականին Ձեր Եկեղեցւոյ Մէջ արարողու-
թիւն ունենալ փափաքիք. Հանձնէք Հազարդել Առաջնորդարան որպէս զի
ընթացք տրուի Ձեր դիմումին:

Մեամբ Տիրաւանդ սիրոյ ողջունելու
Ազօթակէք

ՄԻՌՈՆ Ս.ՎՏԳ. ԿՐԻՍԿՅԱՆ
Առաջնորդական Փոխանորդ